ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 6 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի և ՀՀ ոստիկանության պետի 14.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի աշխատակարգը հաստատելու և ՀՀ ոստիկանության պետի 10.12.2008թ. թիվ 3232-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1860-Ա հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Նշանակել՝

1) ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Արտաշես Ավոյանին - ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նախագահի տեղակալ,

2) ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության տպագիր և էլեկտրոնային մամուլի բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Արգինե Հովհաննիսյանին - ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի քարտուղար:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՕՍԻՊՅԱՆ**

«31» 07 2018թ.

ք. Երևան